ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-1115-26.06.2025-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Չափումների միասնականության ապահովման մասին» 2012 թվականի փետրվարի 8-ի ՀՕ-22-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասի «իրավական հիմքերը, չափումների միասնականության ապահովման բնագավառում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հարաբերությունները և ուղղված է չափումների ոչ հավաստի արդյունքների բացասական հետևանքներից սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, տնտեսության զարգացմանը և գիտատեխնիկական առաջընթացին:» բառերը փոխարինել «ոլորտում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի իրավահարաբերությունները, չափումների, մեծությունների չափման միավորների, չափանմուշի (էտալոն), ստանդարտ նմուշի, չափման միջոցի նկատմամբ և դրանց պահպանմանը ներկայացվող պահանջները, ստանդարտ նմուշի, չափման միջոցի, չափման մեթոդիկայի (մեթոդի) կիրառմանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև չափումների միասնականության ապահովման ոլորտին (այսուհետ՝ չափագիտության) առնչվող (ներառյալ աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը) հարաբերությունները:» բառերով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) **ազգային չափանմուշ (ազգային էտալոն)՝** չափանմուշ, որը չափագիտության լիազոր մարմնի կողմից ճանաչվել է որպես հիմք և օգտագործվում է պետության կամ տնտեսության մեջ տվյալ տեսակի մեծության այլ չափանմուշներին արժեք վերագրելու համար.».

բ. 2-րդ կետի «որն» բառը փոխարինել «որը կանոնավոր կերպով» բառերով .

գ. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) **չափանմուշ (էտալոն)՝** տվյալ մեծության սահմանման նյութականացում՝ մեծության հաստատված (որոշված) արժեքով և չափման անորոշությամբ, օգտագործվում է որպես ելակետ.».

դ. 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) **չափագիտական հետևելիության շղթա (հետևելիության շղթա)՝** չափանմուշների և տրամաչափարկումների հաջորդականության շղթա, որն օգտագործվում է չափման արդյունքը չափանմուշի հետ փոխկապակցելու համար.».

ե. 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին կետով.

«4.1) **չափագիտական հետևելիություն՝** չափման արդյունքի հատկություն, որի համաձայն արդյունքը կարող է հարաբերակցվել համեմատության հիմքի հետ՝ փաստաթղթավորված շարունակական անխախտ տրամաչափարկման շղթայի միջոցով, որոնցից յուրաքանչյուրը ներդրում ունի չափումների անորոշության մեջ.».

զ. 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

է. 7-րդ կետի «կառավարության լիազորած պետական կառավարման մարմին» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման համակարգի մարմին» բառերով.

ը. 9-րդ կետի «չափում կատարելու համար նախատեսված սարք, որը կարող է կիրառվել առանձին կամ լրացուցիչ սարքերի հետ համատեղ.» բառերը փոխարինել «սարք, որն օգտագործվում է չափումներ կատարելու համար, առանձին կամ մեկ կամ մի քանի օժանդակ սարքերի հետ միասին.» բառերով.

թ. 9-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9.1-ին կետով.

«9.1) **սոցիալական և տնտեսական նշանակություն ունեցող չափման միջոց՝** չափման միջոց, որի չափագիտական բնութագրերը, թույլատրելի առավելագույն սխալանքները և ճշտությունը սահմանվում է չափագիտության լիազոր մարմնի կողմից.».

ժ. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) **չափման միջոցի տրամաչափարկում (կալիբրավորում)՝** գործողություն, որը տրված պայմաններում առաջին փուլում սահմանում է կապը մեծության արժեքների ու համապատասխան ցուցմունքների՝ վերաբերելի (համապատասխան) չափումների անորոշություններով, և չափանմուշներից ստացված չափման անորոշությունների միջև, իսկ երկրորդ փուլում այդ տեղեկությունն օգտագործվում է ցուցմունքից չափման արդյունք ստանալու կապը սահմանելու համար.».

ժա. 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11) **չափման միջոցի ստուգաչափում՝** գործողությունների ամբողջություն, որն ապահովում է օբյեկտիվ տվյալներ այն մասին, որ չափման միջոցը բավարարում է կամ չի բավարարում սահմանված չափագիտական պահանջներին և արդյունքում տրամադրվում է չափման միջոցի ստուգաչափման դրական կամ բացասական արդյունքը հավաստող փաստաթուղթ.».

ժբ. 11-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11.1-ին և 11.2-րդ կետերով.

«11.1) **չափման միջոցի ստուգաչափման դրական կամ բացասական արդյունքները հավաստող փաստաթուղթ՝** վկայական, QR կոդ (արագ արձագանքման կոդ, որը պարունակում է նույն տեղեկատվությունն, ինչ վկայականը կամ ինքնակպչուն դրոշմը), ստուգաչափման դրոշմի արտատիպի պատկեր, բարձր պաշտպանվածության համարակալված ինքնակպչուն դրոշմ, նշան կամ նշանների համակցություն, որոնք առանձին կամ համատեղ կիրառմամբ հավաստում են, որ կատարվել է չափման միջոցի ստուգաչափում և հաստատվել է դրա համապատասխանությունը սահմանված պահանջներին կամ ծանուցագիր, ստուգաչափման դրոշմի արտատիպի մարման պատկեր, որոնք առանձին կամ համատեղ կիրառմամբ հավաստում են անհամապատասխանությունը սահմանված պահանջներին.

11.2) **չափման միջոցի ստուգաչափման դրոշմի մարում՝** չափման միջոցի ստուգաչափման դրոշմի արտատիպի չեղարկում չափման միջոցի օրենսդրական պահանջներին այլևս չհամապատասխանելու դեպքում.».

ժգ. 12-րդ և 13-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12) **չափման միջոցի փորձաքննություն՝** դատարանի, դատախազության, արբիտրաժի, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած չափագիտական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի, սպառողների կամ նրանց իրավունքները պաշտպանող կազմակերպությունների գրավոր առաջարկով կամ պահանջով իրականացվող չափման միջոցի ստուգաչափում, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշմման գործունեության համար օգտագործվող սարքավորումների չափագիտական բնութագրերի որոշում.

13) **չափում՝** փորձարարական գործընթացով մեկ կամ մի քանի մեծությունների արժեքների ստացում, որոնք կարելի է վերագրել մեծությանը.».

ժդ. 14-րդ կետի «իսկ չափումների» բառերից հետո լրացնել «առավելագույն թույլատրելի» բառերով.

ժե. 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15) **ստանդարտ նմուշ՝** հատկորոշված բնութագրերի նկատմամբ բավարար համասեռ ու կայուն նյութ, որը ճանաչվել է պիտանի չափումների կամ անվանական բնութագրերի ուսումնասիրության ժամանակ.».

ժզ. 16-րդ կետի «միջոցի» բառից հետո լրացնել «և ստանդարտ նմուշի» բառերով.

ժէ. 16-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16.1-ին և 16.2-րդ կետերով.

«16.1) **տեսակի հաստատում՝** իրավական նշանակություն ունեցող որոշում՝ հիմնված տեսակի գնահատման ուսումնասիրության վրա, առ այն, որ չափման միջոցի և ստանդարտ նմուշի տեսակը համապատասխանում է օրենքով սահմանված համապատասխան պահանջներին և որի արդյունքում տրվում է տեսակի հաստատման սերտիֆիկատ.

16.2) **տեսակի հաստատման ճանաչում՝** կողմի (Չափագիտության ազգային մարմին) կայացրած որոշում, կամավոր կամ երկկողմ կամ բազմակողմ պայմանավորվածության հիման վրա, որով մյուս կողմի (այլ երկրի Չափագիտության ազգային մարմնի) կողմից հաստատված տեսակը ճանաչվում է որպես օրենսդրական պահանջներին համապատասխանող, նոր տեսակի հաստատման սերտիֆիկատի տրամադրմամբ.».

ժը. 18-րդ կետից հանել «չափագիտական հսկողություն և» բառերը.

ժթ. 18.1-ին կետի «չափումների միասնականության ապահովման բնագավառը կանոնակարգող օրենքով և այլ» բառերը փոխարինել «սույն օրենքով և ոլորտը կանոնակարգող» բառերով, իսկ «միջոցների շուկայահանման և (կամ) շահագործման, չափումների կատարման վկայագրված մեթոդիկաների» բառերը փոխարինել «միջոցի շուկայահանման և շահագործման, չափումների կատարման վկայագրված մեթոդիկաների (մեթոդների)» բառերով.

ի. 19-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

իա. 19-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 20-28-րդ կետերով.

«20) **չափման մեթոդիկա (մեթոդ)՝** չափման մոդելի վրա հիմնված մեկ կամ մի քանի չափման սկզբունքների և տվյալ չափման մեթոդիկայի (մեթոդի) համաձայն չափման մանրամասն նկարագրություն, որն իր մեջ ներառում է չափման արդյունքը ստանալու համար յուրաքանչյուր հաշվարկ.

21) **չափման ռեֆերենս մեթոդիկա (մեթոդ)՝** չափման մեթոդիկա (մեթոդ), որը նույն տեսակի մեծությունների չափման այլ մեթոդիկաներից (մեթոդներից) ստացված չափվող մեծության արժեքների չափման ճշտությունը գնահատելիս, տրամաչափարկելիս կամ ստանդարտ նմուշների բնութագրերը որոշելիս ընդունված է որպես ըստ նշանակության օգտագործման համար պիտանի չափման արդյունքներ տրամադրող.

22) **չափման մեթոդիկայի (մեթոդի) վկայագրում՝** չափման մեթոդիկայի (մեթոդի) հետազոտություն և հավաստում, որ այն համապատասխանում է չափումների նկատմամբ սահմանված չափագիտական պահանջներին.

23) **չափագիտական վկայագրում՝** իր կազմում մեկից ավելի չափիչ սարք ունեցող կամ լրացուցիչ սարքերի հետ համատեղ աշխատող չափման միջոցների համալիրների ստուգաչափում.

24) **շուկայահանում՝** չափման միջոցը կամ չափածրարված արտադրանքն առաջին անգամ շուկայահանելը.

25) **կապարակնքում՝** չափման միջոցը փոփոխությունից, վերակարգավորումից, մասերի հեռացնելուց, ծրագրային ապահովմանը միջամտելուց և այլ ցանկացած չարտոնված գործողություններից պաշտպանելու կամ չափման միջոցի շահագործումն արգելելու համար նախատեսված միջոց.

26) **չափածրարված արտադրանք՝** առանց գնորդի ներկայության փաթեթավորված և շուկայահանված արտադրանք, որի պարունակությունն ունի նախասահմանված արժեք և այն հնարավոր չէ փոխել առանց փաթեթը բացելու կամ զգալի փոփոխությունների ենթարկելու.

27) **չափագիտության խորհուրդ՝** Չափագիտության ազգային մարմնին աջակցող խորհրդատվական խորհուրդ.

28) **միավորների միջազգային ՍԻ (SI) համակարգ՝** մեծությունների միջազգային համակարգի միավորների վրա հիմնված, Կշռի և չափի գերագույն համաժողովի (ԿՉԳՀ/CGPM) կողմից ընդունված միավորների համակարգ, դրանց անվանումները և պայմանանշանները, ներառյալ նախածանցների շարքերը, անվանումները և պայմանանշանները՝ օգտագործման կանոնների հետ միասին.».

2) 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ մասով.

«2. Սույն օրենքում չսահմանված հասկացություններն ունեն Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության «Օրենսդրական չափագիտության եզրույթների միջազգային բառարան» ՕԻՄԼ Հ 1 (OIML V 1) և «Չափագիտության միջազգային բառարան. Հիմնական և ընդհանուր հայեցակարգեր ու հարակից եզրույթներ» ՕԻՄԼ Բ2 (OIML V 2) բառարաններով սահմանված հասկացությունների իմաստը:»:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 2-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 2 ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՉԱՓԱՆՄՈՒՇԻՆ, ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑԻՆ, ՍՏԱՆԴԱՐՏ ՆՄՈՒՇԻՆ, ՉԱՓՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻՆ (ՄԵԹՈԴԻՆ), ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑԻ ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ, ՍՏՈՒԳԱՉԱՓՄԱՆԸ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ»:

Հոդված 5. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 4. Մեծությունների չափման միավորներին ներկայացվող պահանջները**

1. Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են Կշիռների և չափերի միջազգային բյուրոյի (ԿՉՄԲ/BIPM) և Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության (ՕՉՄԿ/OIML) կողմից ընդունված միավորների միջազգային ՍԻ (SI) համակարգի մեծությունների չափման միավորները և չափումների սանդղակները, որոնց հետ

համահավասար կարող են կիրառվել մեծությունների չափման արտահամակարգային միավորները՝ հարաբերված միջազգային համակարգի միավորների հետ:

2. Արտահանվող արտադրանքի, այդ թվում՝ չափման միջոցի բնութագրերը և չափորոշիչները կարող են արտահայտվել պատվիրատուի հետ կնքված պայմանագրով նախատեսված մեծությունների չափման միավորներով:

3. Հայաստանի Հանրապետությունում կարող են կիրառվել համընդհանուր ընդունված հատուկ միավորներ, որոնք անհրաժեշտ են՝

1) միջազգային առևտրի համար.

2) օդային և ծովային նավագնացության, առողջապահության, ռազմական նպատակների և անվտանգության համար:

4. Առևտրում, գովազդում, հրապարակումներում, դասագրքերում արգելվում է կիրառել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ սույն հոդվածի 1-ին մասով երաշխավորված մեծությունների չափման միավորներից տարբեր միավորներ, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) հրապարակումներում և ուսուցման ժամանակ հիշատակվում են պատմականորեն օրենքով չսահմանված միավորներ.

2) փաստաթղթերը կամ հրապարակումները նախատեսված են միավորների տարբեր համակարգեր ունեցող երկրների օգտագործողների համար.

3) եթե երաշխավորված միավորներից տարբեր միավորների հետ համատեղ նշված է դրանց համարժեք երաշխավորված միավորների արժեքները:»:

Հոդված 6. Օրենքի 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 5.** Ազգային և աշխատանքային չափանմուշները

1. Ազգային չափանմուշները ստեղծվում են կիրառման երաշխավորված միավորների պահպանման, տարածման և տնտեսության պահանջարկը բավարարելու նպատակով և բաղկացած են Չափագիտության ազգային մարմնի և այլ կազմակերպությունների չափանմուշներից:

2. Ազգային չափանմուշները պետք է ապահովեն չափագիտական հետևելիություն միավորների միջազգային ՍԻ (SI) համակարգին, միջազգային համատեղելիություն և ճանաչում: Ազգային չափանմուշների չափագիտական հետևելիության ապահովման պատասխանատվությունը կրում է չափանմուշ պահպանող կառույցը:

3. Հայաստանի Հանրապետությունում կիրառվող աշխատանքային չափանմուշները պետք է ապահովեն չափագիտական հետևելիություն միավորների միջազգային ՍԻ (SI) համակարգի հետևելի չափանմուշներին:

4. Ազգային չափանմուշի պահպանման և կիրառման կանոններին հետևելն իրականացվում է այն կառույցներում, որտեղ պահվում է չափանմուշը:»:

Հոդված 7. Օրենքի 6-րդ հոդվածի՝

1) վերնագրում «միջոցները» բառը փոխարինել «միջոցներին ներկայացվող պահանջները» բառերով.

2) 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել.

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Օրենսդրական չափագիտության տարածման ոլորտներում տեսակը չհաստատված և ստուգաչափում չանցած չափման միջոցի կիրառումն արգելվում է:»:

Հոդված 8. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ստանդարտ նմուշը նախատեսված է նյութերի բաղադրության կամ հատկությունների բնութագրերը վերարտադրելու, պահելու և փոխանցելու համար՝ Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար հաստատված մեծությունների չափման միավորների արժեքներով:»:

Հոդված 9. Օրենքի 8-րդ հոդվածի՝

1) վերնագրում «մեթոդիկաները» բառը փոխարինել «մեթոդիկային (մեթոդին) ներկայացվող պահանջները» բառերով.

2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Չափման մեթոդիկան (մեթոդը) ներառում է չափումների կատարման նախապատրաստման կանոնները, չափման գործընթացը, տեխնիկական միջոցները, ինչպես նաև չափման արդյունքի մշակման և հաշվարկման կարգը:».

3) 2-րդ մասը «վկայագրման» բառից հետո լրացնել «, եթե միջազգայնորեն ճանաչված չեն» բառերով.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Չափման մեթոդիկան (մեթոդը), այդ թվում ռեֆերենս մեթոդիկան (մեթոդը) հատուկ նկարագրված գործողությունների ամբողջություն է, որի իրականացումն ապահովում է չափման արդյունքների ստացումը ճշգրտության սահմանված ցուցանիշներով:»:

Հոդված 10. Օրենքի 9-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 11. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9.1-ին, 9.2-րդ և 9.3-րդ հոդվածներով.

«**Հոդված 9.1. Չափման միջոցի տեսակի հաստատմանը ներկայացվող պահանջները**

1. Օրենսդրական չափագիտության տարածման ոլորտում կիրառվող և օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ցանկում ներառված չափման միջոցները ենթակա են տեսակի հաստատման:

2. Չափման միջոցի տեսակի հաստատված լինելը հավաստվում է չափման միջոցի տեսակի հաստատման սերտիֆիկատով, որի ձևը սահմանում է չափագիտության լիազոր մարմինը:

3. Չափման միջոցի տեսակի հաստատումն իրականացնում է Չափագիտության ազգային մարմինը:

Հոդված 9.2. Չափման միջոցի ստուգաչափմանը ներկայացվող պահանջները

1. Օրենսդրական չափագիտության տարածման ոլորտում կիրառվող և օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ցանկում ներառված չափման միջոցները ենթակա են ստուգաչափման:

2. Չափման միջոցի ստուգաչափումը, որի կազմակերպման և իրականացման կարգը սահմանվում է չափագիտության լիազոր մարմնի կողմից, լինում է ընտրանքային, առաջնային, կրկնակի, պարտադիր պարբերաբար կատարվող և կամավոր:

3. Չափման միջոցի ստուգաչափում իրականացնող մասնագետները ենթակա են վկայագրման՝ որպես ստուգաչափող:

4. Չափման միջոցի ստուգաչափման, չափագիտական վկայագրման դրական արդյունքները վավերացվում են ստուգաչափումն իրականացնող կազմակերպության կողմից ստուգաչափման դրական արդյունքները հավաստող համապատասխան փաստաթղթի տրամադրմամբ, ըստ անհրաժեշտության կապարակնքելով չափման միջոցը:

5. Չափման միջոցի ստուգաչափման բացասական արդյունքների դեպքում ստուգաչափողը մարում (չեղարկում) է ստուգաչափման դրոշմի արտատիպը՝ համաձայն չափագիտության լիազոր մարմնի կողմից սահմանված կարգի և առձեռն կամ էլեկտրոնային փոստով ներկայացնում է չափման միջոցը ոչ պիտանի ճանաչելու մասին ծանուցագիր:

6. Չափման միջոցի ստուգաչափման դրոշմը համարվում է անվավեր, եթե այն վնասված է:

7. Չափման միջոցի ստուգաչափում, բացառությամբ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտի, կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած կարգով հավատարմագրված իրավաբանական անձինք: Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտի չափման միջոցի ստուգաչափումն իրականացվում է Չափագիտության ազգային մարմնի կողմից:

Հոդված 9.3. Օրենսդրական չափագիտության գործառույթները

1. Օրենսդրական չափագիտության գործառույթներն են՝

1) չափման միջոցի և ստանդարտ նմուշի տեսակի հաստատումը.

2) չափման միջոցի ստուգաչափումը և չափագիտական վկայագրումը.

3) չափման մեթոդիկայի (մեթոդի) վկայագրումը.

4) չափման միջոցների փորձաքննությունը:»:

Հոդված 12. Օրենքի 10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 10. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները չափագիտության ոլորտում**

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը չափագիտության ոլորտում սահմանում է՝

1) սոցիալական և տնտեսական կարևոր նշանակություն ունեցող չափման միջոցներին ներկայացվող պահանջները.

2) մեծությունների չափման միավորի, չափումների սանդղակների հայերեն անվանումը, նշագրումը, գրելաձևը և կիրառման կանոնները.

3) չափանմուշը որպես ազգային չափանմուշ ճանաչելու, պահպանելու, կատարելագործելու և դրա ճանաչումը դադարեցնելու մասին կարգը.

4) չափածրարված արտադրանքին ներկայացվող չափագիտական պահանջները.

5) որպես չափիչ անոթ օգտագործվող շշերին ներկայացվող չափագիտական պահանջները.

6) ոչ ավտոմատ գործողության կշռող սարքերին ներկայացվող պահանջները.

7) օրենսդրական չափագիտության տարածման ոլորտները և դրանցում կիրառվող չափման միջոցների ցանկը.

8) օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցի ներմուծման, ներմուծող կազմակերպության, չափման միջոցի ծագման և արտահանման երկրի վերաբերյալ Պետական եկամուտների կոմիտեի կողմից Չափագիտության ազգային մարմնին և տեսչական մարմնին տեղեկատվություն տրամադրելու կարգը:»:

Հոդված 13. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.1-ին հոդվածով.

«**Հոդված 10.1. Չափագիտության լիազոր մարմինը**

1. Օրենսդրական չափագիտության տարածման ոլորտներում չափումների միասնականության ապահովման պետական կառավարումն իրականացնում է չափագիտության լիազոր մարմինը:

2. Չափագիտության լիազոր մարմինը՝

1) մշակում և համակարգում է պետական քաղաքականության իրականացումն օրենսդրական չափագիտության ոլորտում.

2) համակարգում է Չափագիտության ազգային մարմնի գործունեությունը.

3) ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը միջազգային կազմակերպություններում.

4) սահմանում է չափման միջոցի և ստանդարտ նմուշի տեսակի հաստատման կարգը՝ Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության սահմանած ուղեցույցների հիման վրա, տեսակի հաստատման համար ներկայացվող հայտի, չափման միջոցի և ստանդարտ նմուշի տեսակի հաստատման սերտիֆիկատի ձևերը, տեսակի հաստատման նշանի պատկերը.

5) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափման միջոցների ստուգաչափման պարբերականությունը.

6) սահմանում է չափման միջոցի և ստանդարտ նմուշի տեսակի հաստատման գրանցամատյանի վարման կարգը.

7) սահմանում է չափման միջոցի ստուգաչափման, փորձաքննության կազմակերպման և իրականացման կարգը՝ Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության ուղեցույցների հիման վրա, չափման միջոցի ստուգաչափման համար ներկայացվող հայտի ձևը, չափման միջոցի ստուգաչափման դրական կամ բացասական արդյունքները հավաստող փաստաթղթի ձևը, որը կարող է լինել QR կոդի տեսքով (արագ արձագանքման կոդ, որը պարունակում է նույն տեղեկատվությունն, ինչ վկայականը կամ ինքնակպչուն դրոշմը), ստուգաչափման դրոշմի արտատիպի պատկերը, դրոշմի արտատիպի մարման պատկերը, բարձր պաշտպանվածության համարակալված ինքնակպչուն դրոշմի արտատիպի պատկերը, չափման միջոցը ոչ պիտանի ճանաչելու ընթացակարգը և ծանուցագրի ձևը.

8) սահմանում է չափագիտության կառավարման խորհրդի անհատական կազմը և գործունեության կարգը.

9) ճանաչում է ազգային չափանմուշը, հաստատում է դրա կատարելագործումը և դադարեցնում է ճանաչումը.

10) ընդունում և գործողության մեջ է դնում Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության և Կշիռների և չափերի միջազգային բյուրոյի (ԿՉՄԲ/BIPM) ուղեցույցային փաստաթղթերի հայերեն տարբերակները: »:

Հոդված 14. Օրենքի 11-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի՝

ա. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) պահպանում է իր կազմում գտնվող ազգային չափանմուշի աշխատանքային կարգավիճակը, կատարելագործում է ազգային չափանմուշը, ինչպես նաև իրականացնում է ազգային չափանմուշի՝ չափագիտական հետևելիության ապահովումը մինչև միավորների միջազգային ՍԻ (SI) համակարգ.».

բ. 2-րդ կետի «ապահովում է» բառից հետո լրացնել «իր կազմում գտնվող» բառերով.

գ. 4-րդ կետի «վկայագրում» բառից հետո լրացնել «, եթե չունի չափագիտական հետևելիությունը հավաստող փաստաթուղթ» բառերով.

դ. 7-րդ կետի «աշխատանքներ» բառից հետո լրացնել «չափագիտական» բառով.

ե. 8-րդ կետի «իրականացնում է» բառից հետո լրացնել «չափումներ և» բառերով, իսկ «մեթոդիկաների» բառից հետո լրացնել «(մեթոդների)» բառով.

զ. 10-րդ կետի «միջոցների» բառը փոխարինել «միջոցի և ստանդարտ նմուշի» բառերով.

է. 10.1-ին կետի «միջոցի» բառից հետո լրացնել «և ստանդարտ նմուշի» բառերով.

ը. 11-րդ կետի «վարում է» բառից հետո լրացնել «տեսակը» բառով.

թ. 12-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

ժ. 13-րդ կետի «ստուգաչափում» բառից հետո լրացնել «և չափագիտական վկայագրում» բառերով.

ժա. 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) չափագիտության ոլորտում կազմակերպում և իրականացնում է ինչպես կադրերի ուսուցում, մասնագիտացում, վերապատրաստում, օրենսդրական չափագիտության ոլորտում ստուգաչափում իրականացնող մասնագետների ուսուցում, այնպես էլ չափագիտության ոլորտում համապատասխանության գնահատման մարմինների անձնակազմի վերապատրաստում, հավատարմագրման փորձագետների ուսուցում և շնորհում է համապատասխան վկայագրեր.».

ժբ. 15-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

ժգ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 16-19-րդ կետերով.

«16) իրականացնում է թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշմման գործունեության համար օգտագործվող սարքավորումների փորձաքննություն.

17) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում չընդգրկված չափման միջոցի ստուգաչափման պարբերականությունը՝ տեսակի հաստատման ժամանակ.

18) անհրաժեշտության դեպքում ստեղծում է չափագիտության խորհուրդ և սահմանում նրա գործունեության կարգը.

19) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ։»։

Հոդված 15. Օրենքի 12-րդ հոդվածի՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 12.** Չափագիտության կառավարման խորհուրդը».

2) 1-ին մասում «կառավարման» բառից առաջ լրացնել «Չափագիտության» բառը, «7 անդամներից՝ չափագիտության գերակա ոլորտներում ներգրավված շահագրգիռ 4 պետական կառավարման մարմինների և 3 ոչ պետական կազմակերպությունների ներկայացուցիչներից» բառերը փոխարինել «Խորհրդի նախագահից, 10 անդամներից՝ չափագիտության գերակա ոլորտներում ներգրավված շահագրգիռ 5 պետական կառավարման համակարգի մարմինների և 5 ոչ պետական կազմակերպությունների ներկայացուցիչներից։» բառերով.

3) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

4) 6-րդ մասը «անգամ։» բառից հետո լրացնել «Խորհրդի նիստերը կարող են անցկացվել նաև հեռավար՝ առցանց եղանակով։ Հեռավար նիստերի ժամանակ քվեարկությունը կատարվում է էլեկտրոնային հաղորդակցման միջոցներով։» բառերով.».

5) 8-րդ մասի 2-րդ կետի «ծրագրերը» բառից հետո լրացնել «և հեռանկարային գործունեության հնգամյա ռազմավարությունները.» բառերով.

6) 8-րդ մասի 4-րդ կետի «լիազոր պետական կառավարման» բառերը փոխարինել «լիազորված պետական կառավարման համակարգի» բառերով.

7) 8-րդ մասի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) չափագիտության լիազոր մարմնին ներկայացնում է առաջարկություններ միջազգային լավագույն փորձին ներդաշնակ Հայաստանի Հանրապետությունում չափագիտության ոլորտում պետական քաղաքականության իրականացման հեռանկարային ռազմավարության վերաբերյալ։»։

Հոդված 16. -Օրենքի 4-րդ գլուխն ուժը կորցրած ճանաչել։

:

Հոդված 17. Օրենքի 5-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**ԳԼՈՒԽ 5 ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**»

Հոդված 18. Օրենքի 20-րդ հոդվածի՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 20. Չափագիտական վերահսկողության նպատակները և խնդիրները**».

2) 1-ին մասի «չափումների միասնականության ապահովման բնագավառը կանոնակարգող օրենքով» բառերը փոխարինել «սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով» բառերով.

3) 2-րդ մասի «13-րդ հոդվածով սահմանված օրենսդրական չափագիտական ոլորտների վրա:» բառերը փոխարինել «10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված օրենսդրական չափագիտության տարածման ոլորտների, ինչպես նաև սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված պահանջների վրա:» բառերով.

4) 3-րդ մասի՝

ա. 2-րդ կետում «մեթոդիկաների» բառը փոխարինել «մեթոդիկայի (մեթոդի)» բառերով.

բ. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) չափագիտության ոլորտում գործող նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը:»:

Հոդված 19. Օրենքի 21-րդ հոդվածի՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 21. Տեսչական մարմինը և տեսչական մարմնի ծառայողը**».

2) 1-ին մասի՝

ա. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում «և (կամ)» բառերը փոխարինել «կամ» բառով.

բ. 4-րդ կետում «մեթոդիկաների» բառից հետո լրացնել «(մեթոդների)» բառով.

3) 2-րդ մասի «վերահսկողության շրջանակներում լիազորված» բառերը հանել, իսկ «աշխատանքային չափանմուշ, աշխատանքային չափանմուշի օգտագործման անհնարինության դեպքում սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կարգով հրավիրում է Չափագիտության ազգային մարմնի ներկայացուցչի և (կամ) պահանջում է չափման միջոցի փորձաքննության իրականացում:» բառերը փոխարինել «ստուգաչափված չափման միջոց (չափագիտական հետևելիությունն ապահովող), համապատասխան չափման միջոցի օգտագործման անհնարինության դեպքում տեսչական մարմինը կարող է դիմել Չափագիտության ազգային մարմնին վերջինիս չափման միջոցը ժամանակավորապես օգտագործելու համար՝ համապատասխան փորձագետի տրամադրմամբ, փորձաքննություն անցկացնելու խնդրանքով:» բառերով.

4) 3-րդ մասի «Վերահսկողություն իրականացնող» բառերը հանել, իսկ «կարգադրագրի ձևը» բառերը փոխարինել «կարգադրագրի, չափման միջոցի շահագործումն արգելող կապարակնիքի և կապարակնքման ակտի ձևերը» բառերով.

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Տեսչական մարմնի ծառայողը՝

1) կարգադրագրով արգելում է չափման միջոցների չափագիտական կանոններին ու նորմերին չհամապատասխանող խմբաքանակի իրացումը.

2) ստուգման ընթացքում արձանագրված իրավախախտման հիման վրա տրված կարգադրագրի հետ մեկտեղ ըստ անհրաժեշտության կապարակնքում է չափման միջոցը՝ կազմելով կապարակնքման ակտ և արգելելով վերջինիս շահագործումը.

3) ստուգում է տեսակը հաստատված, ստուգաչափված կամ վկայագրված չափման միջոցի համապատասխանությունը չափագիտական կանոններին ու նորմերին, իսկ ստուգման ընթացքում համապատասխան սարքերի բացակայությամբ պայմանավորված գրավոր հրավիրում է նաև Չափագիտության ազգային մարմնի ներկայացուցչի.

4) չափման միջոցների նկատմամբ վերահսկողության շրջանակներում իրավաբանական անձի և անհատ ձեռնարկատիրոջ կողմից ներկայացված փաստաթղթերի արժանահավատությունը և փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և իրավական այլ ակտերի պահանջներին ստուգելու նպատակով կարող է տեսանկարահանել կամ լուսանկարել.

5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:»:

Հոդված20. Օրենքի 22-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 21. Օրենքի 24-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) չափման միջոցի շահագործման արգելմանը, եթե այն չի անցել ստուգաչափում կամ չափագիտական վկայագրում կամ տեսակը հաստատված չէ կամ չի համապատասխանում հաստատված տեսակին կամ չի համապատասխանում չափագիտական կանոններին և նորմերին.».

2) 2-րդ մասի «տնտեսավարող սուբյեկտի» բառերը փոխարինել «իրավաբանական անձի և անհատ ձեռնարկատիրոջ» բառերով.

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Իրավաբանական անձը և անհատ ձեռնարկատերը պարտավոր է կարգադրագրով սահմանված ժամկետում կարգադրագրի կատարման մասին գրավոր՝ թղթային կամ էլեկտրոնային եղանակով տեղեկացնել տեսչական մարմնին:»

4) 4-րդ մասի «օրենքով» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերով.

5) 4.1-ին մասի «և (կամ)» բառերը փոխարինել «կամ» բառով, իսկ «օրենքով» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերով.

6) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դիմումով կարգադրագրերի կատարման ստուգման դրական արդյունքների հիման վրա կամ տեսչական մարմին կարգադրագրի կատարումը հավաստող փաստաթղթեր ներկայացնելու դեպքում տեսչական մարմնի ղեկավարը 10 աշխատանքային օրվա ընթացքում վերացնում է չափման միջոցի իրացումը կամ շահագործումն արգելելու մասին կարգադրագիրը և գրավոր՝ թղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը:»:

Հոդված22. Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքի պահանջների խախտումն առաջացնում է պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

Հոդված23. Օրենքի 27-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 27. Չափագիտական աշխատանքների և մատուցված ծառայությունների համար վճարումը**

1. Օրենսդրական չափագիտության տարածման ոլորտներում չափման միջոցի ստուգաչափման, չափագիտական վկայագրման աշխատանքները ենթակա են վճարման՝ տվյալ աշխատանքներն իրականացնող մարմնի կողմից սահմանած գներին համապատասխան, բացառությամբ հանրային ծառայությունները կարգավորող ոլորտների, որոնցում կիրառվող չափման միջոցների ստուգաչափման գները սահմանվում են չափագիտության լիազոր մարմնի կողմից:

2. Պատվիրատու հանդես եկող իրավաբանական անձը և անհատ ձեռնարկատերը փոխհատուցում է չափագիտական աշխատանքներ կատարողին չափագիտական աշխատանքների հետ կապված աշխատակիցների գործուղման, ստուգաչափման գործընթացի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումների և միջոցների՝ մինչև աշխատանքների կատարման վայրը փոխադրման ծախսերը:»:

Հոդված24.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) տասներկու ամսվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է սույն օրենքի 12-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը.

2) սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված ժամկետին հաջորդող հինգ ամսվա ընթացքում չափագիտության լիազոր մարմինը հաստատում է սույն օրենքի 13-րդ հոդվածով լրացվող 10.1-ին հոդվածով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը:

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
Կ-1115-26.06.2025-ՏՀ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Չափումների միասնականության ապահովման մասին» 2012 թվականի փետրվարի 8-ի ՀՕ-22-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասի «իրավական հիմքերը, չափումների միասնականության ապահովման բնագավառում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հարաբերությունները և ուղղված է չափումների ոչ հավաստի արդյունքների բացասական հետևանքներից սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, տնտեսության զարգացմանը և գիտատեխնիկական առաջընթացին:» բառերը փոխարինել «ոլորտում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի իրավահարաբերությունները, չափումների, մեծությունների չափման միավորների, չափանմուշի (էտալոն), ստանդարտ նմուշի, չափման միջոցի նկատմամբ և դրանց պահպանմանը ներկայացվող պահանջները, ստանդարտ նմուշի, չափման միջոցի, չափման մեթոդիկայի (մեթոդի) կիրառմանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև չափումների միասնականության ապահովման ոլորտին (այսուհետ՝ չափագիտության) առնչվող (ներառյալ աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը) հարաբերությունները:» բառերով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) **ազգային չափանմուշ (ազգային էտալոն)՝** չափանմուշ, որը չափագիտության լիազոր մարմնի կողմից ճանաչվել է որպես հիմք և օգտագործվում է պետության կամ տնտեսության մեջ տվյալ տեսակի մեծության այլ չափանմուշներին արժեք վերագրելու համար.».

բ. 2-րդ կետի «որն» բառը փոխարինել «որը կանոնավոր կերպով» բառերով .

գ. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) **չափանմուշ (էտալոն)՝** տվյալ մեծության սահմանման նյութականացում՝ մեծության հաստատված (որոշված) արժեքով և չափման անորոշությամբ, օգտագործվում է որպես ելակետ.».

դ. 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) **չափագիտական հետևելիության շղթա (հետևելիության շղթա)՝** չափանմուշների և տրամաչափարկումների հաջորդականության շղթա, որն օգտագործվում է չափման արդյունքը չափանմուշի հետ փոխկապակցելու համար.».

ե. 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին կետով.

«4.1) **չափագիտական հետևելիություն՝** չափման արդյունքի հատկություն, որի համաձայն արդյունքը կարող է հարաբերակցվել համեմատության հիմքի հետ՝ փաստաթղթավորված շարունակական անխախտ տրամաչափարկման շղթայի միջոցով, որոնցից յուրաքանչյուրը ներդրում ունի չափումների անորոշության մեջ.».

զ. 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

է. 7-րդ կետի «կառավարության լիազորած պետական կառավարման մարմին» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման համակարգի մարմին» բառերով.

ը. 9-րդ կետի «չափում կատարելու համար նախատեսված սարք, որը կարող է կիրառվել առանձին կամ լրացուցիչ սարքերի հետ համատեղ.» բառերը փոխարինել «սարք, որն օգտագործվում է չափումներ կատարելու համար, առանձին կամ մեկ կամ մի քանի օժանդակ սարքերի հետ միասին.» բառերով.

թ. 9-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9.1-ին կետով.

«9.1) **սոցիալական և տնտեսական նշանակություն ունեցող չափման միջոց՝** չափման միջոց, որի չափագիտական բնութագրերը, թույլատրելի առավելագույն սխալանքները և ճշտությունը սահմանվում է չափագիտության ~~ոլորտի~~ լիազոր մարմնի կողմից.».

ժ. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) **չափման միջոցի տրամաչափարկում (կալիբրավորում)՝** գործողություն, որը տրված պայմաններում առաջին փուլում սահմանում է կապը մեծության արժեքների ու համապատասխան ցուցմունքների՝ վերաբերելի (համապատասխան) չափումների անորոշություններով, և չափանմուշներից ստացված չափման անորոշությունների միջև, իսկ երկրորդ փուլում այդ տեղեկությունն օգտագործվում է ցուցմունքից չափման արդյունք ստանալու կապը սահմանելու համար.».

ժա. 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11) **չափման միջոցի ստուգաչափում՝** գործողությունների ամբողջություն, որն ապահովում է օբյեկտիվ տվյալներ այն մասին, որ չափման միջոցը բավարարում է կամ չի բավարարում սահմանված չափագիտական պահանջներին և արդյունքում տրամադրվում է չափման միջոցի ստուգաչափման դրական կամ բացասական արդյունքը հավաստող փաստաթուղթ.».

ժբ. 11-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11.1-ին և 11.2-րդ կետերով.

«11.1) **չափման միջոցի ստուգաչափման դրական կամ բացասական արդյունքները հավաստող փաստաթուղթ՝** վկայական, QR կոդ (արագ արձագանքման կոդ, որը պարունակում է նույն տեղեկատվությունն, ինչ վկայականը կամ ինքնակպչուն դրոշմը), ստուգաչափման դրոշմի արտատիպի պատկեր, բարձր պաշտպանվածության համարակալված ինքնակպչուն դրոշմ, նշան կամ նշանների համակցություն, որոնք առանձին կամ համատեղ կիրառմամբ հավաստում են, որ կատարվել է չափման միջոցի ստուգաչափում և հաստատվել է դրա համապատասխանությունը սահմանված պահանջներին կամ ծանուցագիր, ստուգաչափման դրոշմի արտատիպի

մարման պատկեր, որոնք առանձին կամ համատեղ կիրառմամբ հավաստում են անհամապատասխանությունը սահմանված պահանջներին.

11.2) **չափման միջոցի ստուգաչափման դրոշմի մարում՝** չափման միջոցի ստուգաչափման դրոշմի արտատիպի չեղարկում չափման միջոցի օրենսդրական պահանջներին այլևս չհամապատասխանելու դեպքում.».

ժգ. 12-րդ և 13-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12) **չափման միջոցի փորձաքննություն**՝ դատարանի, դատախազության, արբիտրաժի, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած չափագիտական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի, սպառողների կամ նրանց իրավունքները պաշտպանող կազմակերպությունների գրավոր առաջարկով կամ պահանջով իրականացվող չափման միջոցի ստուգաչափում, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշմման գործունեության համար օգտագործվող սարքավորումների չափագիտական բնութագրերի որոշում.

13) **չափում՝** փորձարարական գործընթացով մեկ կամ մի քանի մեծությունների արժեքների ստացում, որոնք կարելի է վերագրել մեծությանը.».

ժդ. 14-րդ կետի «իսկ չափումների» բառերից հետո լրացնել «առավելագույն թույլատրելի» բառերով.

ժե. 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15) **ստանդարտ նմուշ՝** հատկորոշված բնութագրերի նկատմամբ բավարար համասեռ ու կայուն նյութ, որը ճանաչվել է պիտանի չափումների կամ անվանական բնութագրերի ուսումնասիրության ժամանակ.».

ժզ. 16-րդ կետի «միջոցի» բառից հետո լրացնել «և ստանդարտ նմուշի» բառերով.

ժէ. 16-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16.1-ին և 16.2-րդ կետերով.

«16.1) **տեսակի հաստատում՝** իրավական նշանակություն ունեցող որոշում՝ հիմնված տեսակի գնահատման ուսումնասիրության վրա, առ այն, որ չափման միջոցի և ստանդարտ նմուշի տեսակը համապատասխանում է օրենքով սահմանված համապատասխան պահանջներին և որի արդյունքում տրվում է տեսակի հաստատման սերտիֆիկատ.

16.2) **տեսակի հաստատման ճանաչում՝** կողմի (Չափագիտության ազգային մարմին) կայացրած որոշում, կամավոր կամ երկկողմ կամ բազմակողմ պայմանավորվածության հիման վրա, որով մյուս կողմի (այլ երկրի Չափագիտության ազգային մարմնի) կողմից հաստատված տեսակը ճանաչվում է որպես օրենսդրական պահանջներին համապատասխանող, նոր տեսակի հաստատման սերտիֆիկատի տրամադրմամբ.».

ժը. 18-րդ կետից հանել «չափագիտական հսկողություն և» բառերը.

ժթ. 18.1-ին կետի «չափումների միասնականության ապահովման բնագավառը կանոնակարգող օրենքով և այլ» բառերը փոխարինել «սույն օրենքով և ոլորտը կանոնակարգող» բառերով, իսկ «միջոցների շուկայահանման և (կամ) շահագործման, չափումների կատարման վկայագրված մեթոդիկաների» բառերը փոխարինել «միջոցի շուկայահանման և շահագործման, չափումների կատարման վկայագրված մեթոդիկաների (մեթոդների)» բառերով.

ի. 19-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

իա. 19-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 20-28-րդ կետերով.

«20) **չափման մեթոդիկա (մեթոդ)՝** չափման մոդելի վրա հիմնված մեկ կամ մի քանի չափման սկզբունքների և տվյալ չափման մեթոդիկայի (մեթոդի) համաձայն չափման մանրամասն նկարագրություն, որն իր մեջ ներառում է չափման արդյունքը ստանալու համար յուրաքանչյուր հաշվարկ.

21) **չափման ռեֆերենս մեթոդիկա (մեթոդ)՝** չափման մեթոդիկա (մեթոդ), որը նույն տեսակի մեծությունների չափման այլ մեթոդիկաներից (մեթոդներից) ստացված չափվող մեծության արժեքների չափման ճշտությունը գնահատելիս, տրամաչափարկելիս կամ ստանդարտ նմուշների բնութագրերը որոշելիս ընդունված է որպես ըստ նշանակության օգտագործման համար պիտանի չափման արդյունքներ տրամադրող.

22) **չափման մեթոդիկայի (մեթոդի) վկայագրում՝** չափման ~~ուսների~~ մեթոդիկայի (մեթոդի) հետազոտություն և հավաստում, որ այն համապատասխանում է չափումների նկատմամբ սահմանված չափագիտական պահանջներին.

23) **չափագիտական վկայագրում՝** իր կազմում մեկից ավելի չափիչ սարք ունեցող կամ լրացուցիչ սարքերի հետ համատեղ աշխատող չափման միջոցների համալիրների ստուգաչափում.

24) **շուկայահանում՝** չափման միջոցը կամ չափածրարված արտադրանքն առաջին անգամ շուկայահանելը.

25) **կապարակնքում՝** չափման միջոցը փոփոխությունից, վերակարգավորումից, մասերի հեռացնելուց, ծրագրային ապահովմանը միջամտելուց և այլ ցանկացած չարտոնված գործողություններից պաշտպանելու կամ չափման միջոցի շահագործումն արգելելու համար նախատեսված միջոց.

26) **չափածրարված արտադրանք՝** առանց գնորդի ներկայության փաթեթավորված և շուկայահանված արտադրանք, որի պարունակությունն ունի նախասահմանված արժեք և այն հնարավոր չէ փոխել առանց փաթեթը բացելու կամ զգալի փոփոխությունների ենթարկելու.

27) **չափագիտության խորհուրդ՝** Չ~~չ~~ափագիտության ազգային մարմնին աջակցող խորհրդատվական խորհուրդ.

28) **միավորների միջազգային ՍԻ (SI) համակարգ՝** մեծությունների միջազգային համակարգի միավորների վրա հիմնված, Կշռի և չափի գերագույն համաժողովի (ԿՉԳՀ/CGPM) կողմից ընդունված միավորների համակարգ, դրանց անվանումները և պայմանանշանները, ներառյալ նախածանցների շարքերը, անվանումները և պայմանանշանները՝ օգտագործման կանոնների հետ միասին.».

2) 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ մասով.

«2. Սույն օրենքում չսահմանված հասկացություններն ունեն Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության «Օրենսդրական չափագիտության եզրույթների միջազգային բառարան» ՕԻՄԼ Հ 1 (OIML V 1) և «Չափագիտության միջազգային բառարան. Հիմնական և ընդհանուր հայեցակարգեր ու հարակից եզրույթներ» ՕԻՄԼ Բ2 (OIML V 2) բառարաններով սահմանված հասկացությունների իմաստը:»:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 2-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«~~Գլուխ~~ԳԼՈՒԽ 2~~.~~ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՉԱՓԱՆՄՈՒՇԻՆ, ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑԻՆ, ՍՏԱՆԴԱՐՏ ՆՄՈՒՇԻՆ, ՉԱՓՄԱՆ~~ՈՒՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ~~ ՄԵԹՈԴԻԿԱՅԻՆ (ՄԵԹՈԴԻՆ), ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑԻ ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ, ՍՏՈՒԳԱՉԱՓՄԱՆԸ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ»:

Հոդված 5. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 4. Մեծությունների չափման միավորներին ներկայացվող պահանջները**

1. Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են Կշիռների և չափերի միջազգային բյուրոյի (ԿՉՄԲ/BIPM) և Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության (ՕՉՄԿ/OIML) կողմից ընդունված միավորների միջազգային ՍԻ (SI) համակարգի մեծությունների չափման միավորները և չափումների սանդղակները, որոնց հետ համահավասար կարող են կիրառվել մեծությունների չափման արտահամակարգային միավորները՝ հարաբերված միջազգային համակարգի միավորների հետ:

2. Արտահանվող արտադրանքի, այդ թվում՝ չափման միջոցի բնութագրերը և չափորոշիչները կարող են արտահայտվել պատվիրատուի հետ կնքված պայմանագրով նախատեսված մեծությունների չափման միավորներով:

3. Հայաստանի Հանրապետությունում կարող են կիրառվել համընդհանուր ընդունված հատուկ միավորներ, որոնք անհրաժեշտ են՝

1) միջազգային առևտրի համար.

2) օդային և ծովային նավագնացության, առողջապահության, ռազմական նպատակների և անվտանգության համար:

4. Առևտրում, գովազդում, հրապարակումներում, դասագրքերում արգելվում է կիրառել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ սույն հոդվածի 1-ին մասով երաշխավորված մեծությունների չափման միավորներից տարբեր միավորներ, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) հրապարակումներում և ուսուցման ժամանակ հիշատակվում են պատմականորեն օրենքով չսահմանված միավորներ.

2) փաստաթղթերը կամ հրապարակումները նախատեսված են միավորների տարբեր համակարգեր ունեցող երկրների օգտագործողների համար.

3) եթե երաշխավորված միավորներից տարբեր միավորների հետ համատեղ նշված է դրանց համարժեք երաշխավորված միավորների արժեքները:»:

Հոդված 6. Օրենքի 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 5.** Ազգային և աշխատանքային չափանմուշներ~~ին ներկայացվող պահանջները~~

1. Ազգային չափանմուշները ~~ի համակարգը~~ ստեղծվում են~~է~~ կիրառման երաշխավորված միավորների պահպանման, տարածման և տնտեսության պահանջարկը բավարարելու նպատակով և բաղկացած են Չ~~չ~~ափագիտության ազգային մարմնի և այլ կազմակերպությունների չափանմուշներից:

2. Ազգային չափանմուշները պետք է ապահովեն չափագիտական հետևելիություն միավորների միջազգային ՍԻ (SI) համակարգին, միջազգային համատեղելիություն և ճանաչում: Ազգային չափանմուշների չափագիտական հետևելիության ապահովման պատասխանատվությունը կրում է չափանմուշ պահպանող կառույցը:

3. Հայաստանի Հանրապետությունում կիրառվող աշխատանքային չափանմուշները պետք է ապահովեն չափագիտական հետևելիություն միավորների միջազգային ՍԻ (SI) համակարգի հետևելի չափանմուշներին:

4. Ազգային չափանմուշի պահպանման և կիրառման կանոններին հետևելն իրականացվում է այն կառույցներում, որտեղ պահվում է չափանմուշը:»:

Հոդված 7. Օրենքի 6-րդ հոդվածի՝

1) վերնագրում «միջոցները» բառը փոխարինել «միջոցներին ներկայացվող պահանջները» բառերով.

2) 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել.

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Օրենսդրական չափագիտության տարածման ոլորտներում տեսակը չհաստատված և ստուգաչափում չանցած չափման միջոցի կիրառումն արգելվում է:»:

Հոդված 8. Օրենքի 7-րդ հոդվածի՝

~~1) վերնագրում «նմուշները» բառը փոխարինել «նմուշին ներկայացվող պահանջները» բառերով.~~

~~2) 1-ին մասի «հաստատման» բառից հետո լրացնել «, եթե չունի չափագիտական հետևելիությունը հավաստող փաստաթուղթ» բառերով.~~

~~3~~1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ստանդարտ նմուշը նախատեսված է նյութերի բաղադրության կամ հատկությունների բնութագրերը վերարտադրելու, պահելու և փոխանցելու համար՝ Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար հաստատված մեծությունների չափման միավորների արժեքներով:»:

Հոդված 9. Օրենքի 8-րդ հոդվածի՝

1) վերնագրում «մեթոդիկաները» բառը փոխարինել «մեթոդիկային (մեթոդին) ներկայացվող պահանջները» բառերով.

2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Չափման մեթոդիկան (մեթոդը) ներառում է չափումների կատարման նախապատրաստման կանոնները, չափման գործընթացը, տեխնիկական միջոցները, ինչպես նաև չափման արդյունքի մշակման և հաշվարկման կարգը:».

3) 2-րդ մասը «վկայագրման» բառից հետո լրացնել «, եթե միջազգայնորեն ճանաչված չեն» բառերով.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Չափման մեթոդիկան (մեթոդը), այդ թվում ռեֆերենս մեթոդիկան (մեթոդը) հատուկ նկարագրված գործողությունների ամբողջություն է, որի իրականացումն ապահովում է չափման արդյունքների ստացումը ճշգրտության սահմանված ցուցանիշներով:»:

Հոդված 10. Օրենքի 9-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 11. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9.1-ին, 9.2-րդ և 9.3-րդ հոդվածներով.

«**Հոդված 9.1. Չափման միջոցի տեսակի հաստատմանը ներկայացվող պահանջները**

1. Օրենսդրական չափագիտության տարածման ոլորտում կիրառվող և օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ցանկում ներառված չափման միջոցները ենթակա են տեսակի հաստատման:

2. Չափման միջոցի տեսակի հաստատված լինելը հավաստվում է չափման միջոցի տեսակի հաստատման սերտիֆիկատով, որի ձևը սահմանում է չափագիտության լիազոր մարմինը:

3. Չափման միջոցի տեսակի հաստատումն իրականացնում է Չչափագիտության ազգային մարմինը:

Հոդված 9.2. Չափման միջոցի ստուգաչափմանը ներկայացվող պահանջները

1. Օրենսդրական չափագիտության տարածման ոլորտում կիրառվող և օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ցանկում ներառված չափման միջոցները ենթակա են ստուգաչափման:

2. Չափման միջոցի ստուգաչափումը, որի կազմակերպման և իրականացման կարգը սահմանվում է չափագիտության լիազոր մարմնի կողմից, լինում է ընտրանքային, առաջնային, կրկնակի, պարտադիր պարբերաբար կատարվող և կամավոր:

3. Չափման միջոցի ստուգաչափում իրականացնող մասնագետները ենթակա են վկայագրման՝ որպես ստուգաչափող:

4. Չափման միջոցի ստուգաչափման, չափագիտական վկայագրման դրական արդյունքները վավերացվում են ստուգաչափումն իրականացնող կազմակերպության կողմից ստուգաչափման դրական արդյունքները հավաստող համապատասխան փաստաթղթի տրամադրմամբ, ըստ անհրաժեշտության կապարակնքելով չափման միջոցը:

5. Չափման միջոցի ստուգաչափման բացասական արդյունքների դեպքում ստուգաչափողը մարում (չեղարկում) է ստուգաչափման դրոշմի արտատիպը՝ համաձայն չափագիտության լիազոր մարմնի կողմից սահմանված կարգի և առձեռն կամ էլեկտրոնային փոստով ներկայացնում է չափման միջոցը ոչ պիտանի ճանաչելու մասին ծանուցագիր:

6. Չափման միջոցի ստուգաչափման դրոշմը համարվում է անվավեր, եթե այն վնասված է:

7. Չափման միջոցի ստուգաչափում, բացառությամբ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտի, կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած կարգով հավատարմագրված իրավաբանական անձինք: Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտի չափման միջոցի ստուգաչափումն իրականացվում է Չափագիտության ազգային մարմնի կողմից:

Հոդված 9.3. Օրենսդրական չափագիտության գործառույթները

1. Օրենսդրական չափագիտության գործառույթներն են՝

1) չափման միջոցի և ստանդարտ նմուշի տեսակի հաստատումը.

2) չափման միջոցի ստուգաչափումը և չափագիտական վկայագրումը.

3) չափման ~~ումների կատարման~~ մեթոդիկայի (մեթոդի) վկայագրումը.

4) չափման միջոցների փորձաքննությունը:»:

Հոդված 12. Օրենքի 10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 10. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները չափագիտության ոլորտում**

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը չափագիտության ոլորտում սահմանում է՝

1) ~~սահմանում է~~ սոցիալական և տնտեսական կարևոր նշանակություն ունեցող չափման միջոցներին ներկայացվող պահանջները.

2) ~~սահմանում է~~ մեծությունների չափման միավորի, չափումների սանդղակների հայերեն անվանումը, նշագրումը, գրելաձևը և կիրառման կանոնները.

3) ~~սահմանում է~~ չափանմուշը որպես ազգային չափանմուշ ճանաչելու, պահպանելու, կատարելագործելու և դրա ճանաչումը դադարեցնելու մասին կարգը.

4) ~~սահմանում է~~ չափածրարված արտադրանքին ներկայացվող չափագիտական պահանջները.

5) ~~սահմանում է~~ որպես չափիչ անոթ օգտագործվող 22երին ներկայացվող չափագիտական պահանջները.

6) ~~սահմանում է~~ ոչ ավտոմատ գործողության կշռող սարքերին ներկայացվող պահանջները.

7) ~~սահմանում է~~ օրենսդրական չափագիտության տարածման ոլորտները և դրանցում կիրառվող չափման միջոցների ցանկը.

8) ~~սահմանում է~~ օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցի ներմուծման, ներմուծող կազմակերպության, չափման միջոցի ծագման և արտահանման երկրի վերաբերյալ Պետական եկամուտների կոմիտեի կողմից Չափագիտության ազգային մարմնին և ~~չափագիտական վերահսկողություն իրականացնող~~ տեսչական մարմնին տեղեկատվություն տրամադրելու կարգը:»:

Հոդված 13. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.1-ին հոդվածով.

«**Հոդված 10.1. Չափագիտության լիազոր մարմինը** ~~**Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման համակարգի մարմինը**~~

1. Օրենսդրական չափագիտության տարածման ոլորտներում չափումների միասնականության ապահովման պետական կառավարումն իրականացնում է չափագիտության լիազոր մարմինը:

2. Չափագիտության լիազոր մարմինը՝

1) մշակում և համակարգում է պետական քաղաքականության իրականացումն օրենսդրական չափագիտության ոլորտում.

2) համակարգում է Չչափագիտության ազգային մարմնի գործունեությունը.

3) ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը միջազգային կազմակերպություններում.

4) սահմանում է չափման միջոցի և ստանդարտ նմուշի տեսակի հաստատման կարգը՝ Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության սահմանած ուղեցույցների հիման վրա, տեսակի հաստատման համար ներկայացվող հայտի, չափման միջոցի և ստանդարտ նմուշի տեսակի հաստատման սերտիֆիկատի ձևերը, տեսակի հաստատման նշանի պատկերը.

5) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափման միջոցների ստուգաչափման պարբերականությունը.

6) սահմանում է չափման միջոցի և ստանդարտ նմուշի տեսակի հաստատման գրանցամատյանի վարման կարգը.

7) սահմանում է չափման միջոցի ստուգաչափման, փորձաքննության կազմակերպման և իրականացման կարգը՝ Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության ուղեցույցների հիման վրա, չափման միջոցի ստուգաչափման համար ներկայացվող հայտի ձևը, ~~ստուգաչափման վկայականի~~ չափման միջոցի ստուգաչափման դրական կամ բացասական արդյունքները հավաստող փաստաթղթի ձևը, որը կարող է լինել QR կոդի տեսքով (արագ արձագանքման կոդ, որը պարունակում է նույն տեղեկատվությունն, ինչ վկայականը կամ ինքնակպչուն դրոշմը), ստուգաչափման դրոշմի արտատիպի պատկերը, դրոշմի արտատիպի մարման պատկերը,

բարձր պաշտպանվածության համարակալված ինքնակպչուն դրոշմի արտատիպի պատկերը, չափման միջոցը ոչ պիտանի ճանաչելու ընթացակարգը և ծանուցագրի ձևը.

8) սահմանում է չափագիտության կառավարման խորհրդի անհատական կազմը և գործունեության կարգը.

9) ճանաչում է ազգային չափանմուշը, հաստատում է դրա կատարելագործումը և դադարեցնում է ճանաչումը.

10) ընդունում և գործողության մեջ է դնում Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության և Կշիռների և չափերի միջազգային բյուրոյի (ԿՉՄԲ/BIPM) ուղեցույցային փաստաթղթերի հայերեն տարբերակները: »:

Հոդված 14. Օրենքի 11-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի՝

ա. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) պահպանում է իր կազմում գտնվող ազգային չափանմուշի աշխատանքային կարգավիճակը, կատարելագործում է ազգային չափանմուշը, ինչպես նաև իրականացնում է ազգային չափանմուշի՝ չափագիտական հետևելիության ապահովումը մինչև միավորների միջազգային ՍԻ (SI) համակարգ.».

բ. 2-րդ կետի «ապահովում է» բառից հետո լրացնել «իր կազմում գտնվող» բառերով.

գ. 4-րդ կետի «վկայագրում» բառից հետո լրացնել «, եթե չունի չափագիտական հետևելիությունը հավաստող փաստաթուղթ» բառերով.

դ. 7-րդ կետի «աշխատանքներ» բառից հետո լրացնել «չափագիտական» բառով.

ե. 8-րդ կետի «իրականացնում է» բառից հետո լրացնել «չափումներ և» բառերով, իսկ «մեթոդիկաների» բառից հետո լրացնել «(մեթոդների)» բառով.

զ. 10-րդ կետի «միջոցների» բառը փոխարինել «միջոցի և ստանդարտ նմուշի» բառերով.

է. 10.1-ին կետի «միջոցի» բառից հետո լրացնել «և ստանդարտ նմուշի» բառերով.

ը. 11-րդ կետի «վարում է» բառից հետո լրացնել «տեսակը» բառով.

թ. 12-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

ժ. 13-րդ կետի «ստուգաչափում» բառից հետո լրացնել «և չափագիտական վկայագրում» բառերով.

ժա. 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) չափագիտության ոլորտում կազմակերպում և իրականացնում է ինչպես կադրերի ուսուցում, մասնագիտացում, վերապատրաստում, օրենսդրական չափագիտության ոլորտում ստուգաչափում իրականացնող մասնագետների ուսուցում, այնպես էլ չափագիտության ոլորտում համապատասխանության գնահատման մարմինների անձնակազմի վերապատրաստում, հավատարմագրման փորձագետների ուսուցում և շնորհում է համապատասխան վկայագրեր.».

ժբ. 15-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

ժգ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 16-19-րդ կետերով.

«16) իրականացնում է թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշմման գործունեության համար օգտագործվող սարքավորումների փորձաքննություն.

17) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում չընդգրկված չափման միջոցի ստուգաչափման պարբերականությունը՝ տեսակի հաստատման ժամանակ.

18) անհրաժեշտության դեպքում ստեղծում է չափագիտության խորհուրդ և սահմանում նրա գործունեության կարգը.

19) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ։»։

Հոդված 15. Օրենքի 12-րդ հոդվածի՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 12.** Չափագիտության կառավարման խորհուրդը».

2) 1-ին մասում «կառավարման» բառից առաջ լրացնել «Չափագիտության» բառը, «7 անդամներից՝ չափագիտության գերակա ոլորտներում ներգրավված շահագրգիռ 4 պետական կառավարման մարմինների և 3 ոչ պետական կազմակերպությունների ներկայացուցիչներից» բառերը փոխարինել «Խորհրդի նախագահից, 10 անդամներից՝ չափագիտության գերակա ոլորտներում ներգրավված շահագրգիռ 5 պետական կառավարման համակարգի մարմինների և 5 ոչ պետական կազմակերպությունների ներկայացուցիչներից։» բառերով.

3) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

4) 6-րդ մասը «անգամ։» բառից հետո լրացնել «Խորհրդի նիստերը կարող են անցկացվել նաև հեռավար՝ առցանց եղանակով։ Հեռավար նիստերի ժամանակ քվեարկությունը կատարվում է էլեկտրոնային հաղորդակցման միջոցներով։» բառերով.».

5) 8-րդ մասի 2-րդ կետի «ծրագրերը» բառից հետո լրացնել «և հեռանկարային գործունեության հնգամյա ռազմավարությունները.» բառերով.

6) 8-րդ մասի 4-րդ կետի «լիազոր պետական կառավարման» բառերը փոխարինել «լիազորված պետական կառավարման համակարգի» բառերով.

7) 8-րդ մասի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) չափագիտության լիազոր մարմնին ներկայացնում է առաջարկություններ միջազգային լավագույն փորձին ներդաշնակ Հայաստանի Հանրապետությունում չափագիտության ոլորտում պետական քաղաքականության իրականացման հեռանկարային ռազմավարության վերաբերյալ։»։

Հոդված 16. -Օրենքի ~~13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ~~ 4-րդ գլուխն ~~հոդվածներն~~ ուժը կորցրած ճանաչել։

~~**Հոդված 17.** Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «13-րդ հոդվածի 2-րդ մասով» բառերը փոխարինել «10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով» բառերով~~:

~~**Հոդված 18.** Օրենքի 19-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել։~~

Հոդված 1~~9~~7. Օրենքի 5-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**ԳԼՈՒԽ 5~~.~~ ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**»

Հոդված ~~20~~18. Օրենքի 20-րդ հոդվածի՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 20. Չափագիտական վերահսկողության նպատակները և խնդիրները**».

2) 1-ին մասի «չափումների միասնականության ապահովման բնագավառը կանոնակարգող օրենքով» բառերը փոխարինել «սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով» բառերով.

3) 2-րդ մասի «13-րդ հոդվածով սահմանված օրենսդրական չափագիտական ոլորտների վրա:» բառերը փոխարինել «10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված օրենսդրական չափագիտության տարածման ոլորտների, ինչպես նաև սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված պահանջների վրա:» բառերով.

4) 3-րդ մասի՝

ա. 2-րդ կետում «մեթոդիկաների» բառը փոխարինել «մեթոդիկայի (մեթոդի)» բառերով.

բ. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) չափագիտության ոլորտում գործող նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը:»:

Հոդված ~~21~~19. Օրենքի 21-րդ հոդվածի՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 21. ~~Չափագիտական վերահսկողություն իրականացնող տ~~Տեսչական մարմինը և տեսչական մարմնի ծառայողը**».

2) 1-ին մասի՝

ա. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում «և (կամ)» բառերը փոխարինել «կամ» բառով.

բ. 4-րդ կետում «մեթոդիկաների» բառից հետո լրացնել «(մեթոդների)» բառով.

3) 2-րդ մասի «վերահսկողության շրջանակներում լիազորված» բառերը հանել, իսկ «աշխատանքային չափանմուշ, աշխատանքային չափանմուշի օգտագործման անհնարինության դեպքում սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կարգով հրավիրում է Չափագիտության ազգային մարմնի ներկայացուցչի և (կամ) պահանջում է չափման միջոցի փորձաքննության իրականացում:» բառերը փոխարինել «ստուգաչափված չափման միջոց (չափագիտական հետևելիությունն ապահովող), համապատասխան չափման միջոցի օգտագործման անհնարինության դեպքում տեսչական մարմինը կարող է դիմել Չափագիտության ազգային մարմնին վերջինիս չափման միջոցը ժամանակավորապես օգտագործելու համար՝ համապատասխան փորձագետի տրամադրմամբ, փորձաքննություն անցկացնելու խնդրանքով:» բառերով.

4) 3-րդ մասի «Վերահսկողություն իրականացնող» բառերը հանել, իսկ «կարգադրագրի ձևը» բառերը փոխարինել «կարգադրագրի, չափման միջոցի շահագործումն արգելող կապարակնիքի և կապարակնքման ակտի ձևերը» բառերով.

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Տեսչական մարմնի ծառայողը՝

1) կարգադրագրով արգելում է չափման միջոցների չափագիտական կանոններին ու նորմերին չհամապատասխանող խմբաքանակի իրացումը.

2) ստուգման ընթացքում արձանագրված իրավախախտման հիման վրա տրված կարգադրագրի հետ մեկտեղ ըստ անհրաժեշտության կապարակնքում է չափման միջոցը՝ կազմելով կապարակնքման ակտ և արգելելով վերջինիս շահագործումը.

3) ստուգում է տեսակը հաստատված, ստուգաչափված կամ վկայագրված չափման միջոցի համապատասխանությունը չափագիտական կանոններին ու նորմերին, իսկ ստուգման ընթացքում համապատասխան սարքերի բացակայությամբ պայմանավորված գրավոր հրավիրում է նաև Չափագիտության ազգային մարմնի ներկայացուցչի.

4) չափման միջոցների նկատմամբ վերահսկողության շրջանակներում իրավաբանական անձի և անհատ ձեռնարկատիրոջ կողմից ներկայացված փաստաթղթերի արժանահավատությունը և փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և իրավական այլ ակտերի պահանջներին ստուգելու նպատակով կարող է տեսանկարահանել կամ լուսանկարել.

5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:»:

Հոդված ~~22~~20. Օրենքի 22-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~23~~21. Օրենքի 24-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) չափման միջոցի շահագործման արգելմանը, եթե այն չի անցել ստուգաչափում կամ չափագիտական վկայագրում կամ տեսակը հաստատված չէ կամ չի համապատասխանում հաստատված տեսակին կամ չի համապատասխանում չափագիտական կանոններին և նորմերին.».

2) 2-րդ մասի «տնտեսավարող սուբյեկտի» բառերը փոխարինել «իրավաբանական անձի և անհատ ձեռնարկատիրոջ» բառերով.

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Իրավաբանական անձը և անհատ ձեռնարկատերը պարտավոր է կարգադրագրով սահմանված ժամկետում կարգադրագրի կատարման մասին գրավոր՝ թղթային կամ էլեկտրոնային եղանակով տեղեկացնել տեսչական մարմնին:»

4) 4-րդ մասի «օրենքով» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերով.

5) 4.1-ին մասի «և (կամ)» բառերը փոխարինել «կամ» բառով, իսկ «օրենքով» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերով.

6) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դիմումով կարգադրագրերի կատարման ստուգման դրական արդյունքների հիման վրա կամ տեսչական մարմին կարգադրագրի կատարումը հավաստող փաստաթղթեր ներկայացնելու դեպքում տեսչական մարմնի ղեկավարը 10 աշխատանքային օրվա ընթացքում վերացնում է չափման միջոցի իրացումը կամ շահագործումն արգելելու մասին կարգադրագիրը և գրավոր՝ թղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը:»:

Հոդված ~~24~~22. Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքի պահանջների խախտումն առաջացնում է պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

Հոդված ~~25~~**23.** Օրենքի 27-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 27. Չափագիտական աշխատանքների և մատուցված ծառայությունների համար վճարումը**

1. Օրենսդրական չափագիտության տարածման ոլորտներում չափման միջոցի ստուգաչափման, չափագիտական վկայագրման աշխատանքները ենթակա են վճարման՝ տվյալ աշխատանքներն իրականացնող մարմնի կողմից սահմանած գներին համապատասխան, բացառությամբ հանրային ծառայությունները կարգավորող ոլորտների, որոնցում կիրառվող չափման միջոցների ստուգաչափման գները սահմանվում են չափագիտության լիազոր մարմնի կողմից:

2. Պատվիրատու հանդես եկող իրավաբանական անձը և անհատ ձեռնարկատերը փոխհատուցում է չափագիտական աշխատանքներ կատարողին չափագիտական աշխատանքների հետ կապված աշխատակիցների գործուղման, ստուգաչափման գործընթացի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումների և միջոցների՝ մինչև աշխատանքների կատարման վայրը փոխադրման ծախսերը:»:

Հոդված ~~26~~**24**. ~~**Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) տասներկու ամսվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է սույն օրենքի 12-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը.

2) սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված ժամկետին հաջորդող հինգ ամսվա ընթացքում չափագիտության լիազոր մարմինը հաստատում է սույն օրենքի 13-րդ հոդվածով լրացվող 10.1-ին հոդվածով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1115-26.06.2025-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**Կառավարություն**	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «թ» պարբերությամբ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 9.1-ին կետ Նախագծի 11-րդ հոդվածով Օրենքում լրացվող 9.2-րդ հոդվածի 2-րդ մաս Նախագծի 25-րդ հոդվածով (նոր խմբագրությամբ՝ Նախագծի 23-րդ հոդված) Օրենքի նոր խմբագրությամբ լրացվող 27-րդ հոդվածի 1-ին մաս	Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը՝ համաձայն որի միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառել միևնույն բառը, տերմինը կամ բառակապակցությունը՝ «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «թ» պարբերությամբ «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 9.1-ին կետի «չափագիտության ոլորտի լիազոր մարմնի» բառերը, Նախագծի 11-րդ հոդվածով Օրենքում լրացվող 9.2-րդ հոդվածի 2-րդ մասի և Նախագծի 25-րդ հոդվածով (լրամշակված 23-րդ հոդված) նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի «լիազոր մարմնի» բառերը փոխարինել «չափագիտության լիազոր մարմնի» բառերով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

2.	**Կառավարություն**	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ժա» պարբերությամբ նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ	Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 115-րդ և 16-րդ հոդվածների պահանջները՝ Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ժա» պարբերությամբ նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի վերջում լրացնել չակերտ և «.» կետադրական նշանը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
3.	**Կառավարություն**	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ժէ» պարբերությամբ լրացվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետից հետո լրացվող 16.2-րդ կետ Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «իա» պարբերությամբ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետից հետո լրացվող 27-րդ կետ Նախագծի 6-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մաս Նախագծի 11-րդ հոդվածով լրացվող Օրենքի 9.1-ին հոդվածի 3-րդ մաս Նախագծի 13-րդ հոդվածով լրացվող Օրենքի 10.1-ին	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ժէ» պարբերությամբ լրացվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետից հետո լրացվող 16.2-րդ կետի, Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «իա» պարբերությամբ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետից հետո լրացվող 27-րդ կետի, Նախագծի 6-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի, Նախագծի 11-րդ հոդվածով լրացվող Օրենքի 9.1-ին հոդվածի 3-րդ մասի, Նախագծի 13-րդ հոդվածով լրացվող Օրենքի 10.1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «չափագիտության» բառը գրել մեծատառով՝ («Չափագիտության»):	**Ընդունվել է:**	**Ընդունվել է :**

		հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ			
4.	**Կառավարություն**	**Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի «իա» պարբերությամբ լրացվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետ** **Նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող Օրենքի 2-րդ գլուխ** Նախագծի **11-րդ հոդվածով լրացվող Օրենքի 9.3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ**	Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը՝ համաձայն որի միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառել միևնույն բառը, տերմինը կամ բառակապակցությունը՝ **Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի «իա» պարբերությամբ լրացվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի** «չափումների» բառը, **Նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող Օրենքի 2-րդ գլխի վերնագրի**, Նախագծի **11-րդ հոդվածով լրացվող Օրենքի 9.3 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի** «չափումների կատարման» **բառերը փոխարինել** «չափման» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
5.	**Կառավարություն**	Նախագծի 4-րդ հոդվածով լրամշակվող Օրենքի 2-րդ գլուխ, Նախագծի 5-րդ հոդվածով լրամշակվող Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մաս, Նախագծի 8-րդ հոդվածով լրամշակվող Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մաս Նախագծի 12-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը՝ համաձայն որի միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառել միևնույն բառը, տերմինը կամ բառակապակցությունը՝ Նախագծի 4-րդ հոդվածով լրամշակվող Օրենքի 2-րդ գլխի վերնագրի, Նախագծի 5-րդ հոդվածով լրամշակվող Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի («արտահամակարգային» բառից առաջ), Նախագծի 8-րդ հոդվածով լրամշակվող Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի, Նախագծի 12-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «մեծությունների» բառից հետո լրացնել «չափման» բառը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

6.	**Կառավարություն**	Նախագծի 4-րդ հոդվածով շարադրվող Օրենքի 2-րդ գլուխ Նախագծի 19-րդ հոդվածով (լրամշակված տարբերակում՝ 17-րդ հոդվածով) շարադրվող 5-րդ գլուխ	Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասը, համաձայն որի նորմատիվ իրավական ակտի գլուխների և բաժինների վերնագրերը գրվում են մեծատառերով, և վերնագրերի վերջում որևէ կետադրական նշան չի դրվում՝ Նախագծի 4-րդ հոդվածով Օրենքի 2-րդ գլխի վերնագրի «Գլուխ» բառը գրել մեծատառերով, իսկ Նախագծի 4-րդ հոդվածով Օրենքի 2-րդ գլխի և Նախագծի 19-րդ հոդվածով (լրամշակված 17-րդ հոդվածով) Օրենքի 5-րդ գլխի համարակալումից հետո դրված միջակետը հանել:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է :**
7.	**Կառավարություն**	Նախագծի 6-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ հոդված	Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը, համաձայն որի հոդվածների վերնագրերը պետք է համապատասխանեն հոդվածների բովանդակությանը՝ խմբագրել Նախագծի 6-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ հոդվածի վերնագիրը և 1-ին մասը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
8.	**Կառավարություն**	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետեր, 3 -րդ (լրամշակված՝ 1-ին կետ) կետով Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մաս	1. Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը, համաձայն որի հոդվածների վերնագրերը պետք է համապատասխանեն հոդվածների բովանդակությանը՝ հանել Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, քանի որ Օրենքի 7-րդ հոդվածով «ստանդարտ նմուշի» նկատմամբ պահանջներ չեն սահմանվում, այն պարունակում է «ստանդարտ նմուշին» առնչող նկարագրական մաս: 2. Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը՝ համաձայն որի	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ, ինչպես նաև այն, որ Նախագծով սահմանված չէ «չափագիտական հետևելիությունը հավաստող փաստաթուղթ» հասկացությունը՝ Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը հանել և ըստ այդմ համարակալել Նախագծի 8-րդ հոդվածը:		
9.	**Կառավարություն**	Նախագծի 12-րդ հոդվածով շարադրվող Օրենքի 10-րդ հոդված	Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը՝ համաձայն որի նորմատիվ իրավական ակտերում չպետք է անհիմն կրկնվեն գործող նորմատիվ իրավական ակտերով սահմանված նորմերը՝ խմբագրել Նախագծի 12-րդ հոդվածով շարադրվող Օրենքի 10-րդ հոդվածը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
10.		Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ Նախագծի 21-րդ հոդվածի (լրամշակված Նախագծի 19-րդ հոդվածի) 1-ին մասով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 21-րդ հոդվածի վերնագիր, 3-րդ և 4-րդ մասեր	Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը՝ համաձայն որի, նույն նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացության կամ տերմինի բովանդակությունը տարբեր իմաստներով կրկնվելու դեպքում կիրառվում է հասկացության կամ տերմինի այն բովանդակությունը, որը բխում է տվյալ իրավական ակտի էությունից՝ Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետից, Նախագծի 21-րդ հոդվածի (լրամշակված 19-րդ հոդված) 1-ին մասով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 21-րդ հոդվածի վերնագրից հանել «չափագիտական վերահսկողություն իրականացնող» բառերը,	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			Միաժամանակ Նախագծի 21-րդ հոդվածի (լրամշակված 19-րդ հոդված) 1-ին մասով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի «2-րդ մասի» բառերից հետո լրացնել «վերահսկողության շրջանակներում լիազորված» բառերը հանել, իսկ» բառերը, իսկ 4-րդ մասում՝ «3-րդ մասի» բառերից հետո լրացնել «Վերահսկողություն իրականացնող» բառերը հանել, իսկ» բառերը:		
11.	**Կառավարություն**	Նախագծի 13-րդ հոդվածով Օրենքում լրացվող 10.1 հոդված	Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը՝ համաձայն որի, նույն նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացության կամ տերմինի բովանդակությունը տարբեր իմաստներով կրկնվելու դեպքում կիրառվում է հասկացության կամ տերմինի այն բովանդակությունը, որը բխում է տվյալ իրավական ակտի էությունից՝ Նախագծի 13-րդ հոդվածով Օրենքում լրացվող 10.1-ին հոդվածի վերնագրում «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման համակարգի մարմինը» բառերը փոխարինել «Չափագիտության լիազոր մարմինը» բառերով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
12.	**Կառավարություն**	Նախագծի 13-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 10.1-ին հոդված	Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածների պահանջները՝ Նախագծի 13-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 10.1-ին հոդվածի վերջում լրացնել չակերտ և «:» կետադրական նշանը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
13.	**Կառավարություն**	Նախագծի 13-րդ հոդվածով լրացվող Օրենքի 10.1-ին	Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը՝ համաձայն որի միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառել	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

		հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետ	միևնույն բառը, տերմինը կամ բառակապակցությունը՝ Նախագծի 13-րդ հոդվածով լրացվող Օրենքի 10.1-ին հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի «ստուգաչափման վկայական» բառերը փոխարինել «չափման միջոցի ստուգաչափման դրական կամ բացասական արդյունքները հավաստող փաստաթղթի» բառերով:		
14.	**Կառավարություն**	Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին կետով Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մաս	Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը՝ համաձայն որի միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառել միևնույն բառը, տերմինը կամ բառակապակցությունը՝ Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին կետով Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «1-ին մասում» բառերից հետո լրացնել «կառավարման» բառից առաջ լրացնել «Չափագիտության» բառը» բառերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
15.	**Կառավարություն**	**Նախագծի 16-րդ հոդված** **Օրենքի 4-րդ գլուխ** **Նախագծի 17-րդ հոդված** **Նախագծի 18-րդ հոդված**	Հաշվի առնելով, որ Նախագծի 17-րդ հոդվածով նախատեսված դրույթը կարգավորվել է Նախագծի 12-րդ հոդվածով նոր խմբագրությամբ առաջարկվող Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ինչպես նաև Նախագծի 18-րդ հոդվածով ուժը կորցրած է ճանաչվում Օրենքի 19-րդ հոդվածը՝ առաջարկում ենք Նախագծի 16-րդ հոդվածով Օրենքի 4-րդ գլուխն ուժը կորցրած ճանաչել և Նախագծի 16-րդ հոդվածի «13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ հոդվածներն» բառերը փոխարինել «4-րդ գլուխն» բառերով: Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանել Նախագծի 17-րդ և 18-րդ հոդվածները և փոխել Նախագծի 16-րդ հոդվածին հաջորդող հոդվածների համարները:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

16.	**Կառավարություն**	Նախագծի 23-րդ հոդվածի (խմբագրված Նախագծի 21-րդ հոդվածի) 1-ին մասի 3-րդ կետով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մաս 4-րդ, 4.1-ին մասեր	Հաշվի առնելով տեսչական մարմինների ոլորտը կանոնակարգող օրենսդրության պահանջները՝ Նախագծի 23-րդ հոդվածի (լրամշակված 21-րդ հոդված) 1-ին մասի 3-րդ կետով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասում «գրավոր» բառից հետո լրացնել «՝ թղթային» բառով, Նախագծի 23-րդ հոդվածի (լրամշակված 21-րդ հոդված) 1-ին մասի 6-րդ կետով Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի «գրավոր» բառից հետո լրացնել «՝ թղթային կամ էլեկտրոնային եղանակով» բառերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
17.	**Կառավարություն**	Նախագծի 26-րդ հոդված (լրամշակված տարբերակում՝ 24-րդ հոդվածով)	Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը, համաձայն որի օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի՝ հանել Նախագծի 26-րդ (լրամշակված 24-րդ հոդված) հոդվածի վերնագիրը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
18.	**Կառավարություն**	Նախագծի 26-րդ հոդվածի (լրամշակված տարբերակում՝ 24-րդ հոդված) 2-րդ մասի 1-ին կետի	Նախագծի 26-րդ հոդվածի (լրամշակված 24-րդ հոդված) «10-րդ» բառից առաջ լրացնել «Օրենքի» բառը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**